ԿԱՐԵՆ ՍԵԴՐԱԿԻ ԹՈԽԱԹՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 23.05.1960
Ծննդավայր՝ ՀՀ, Երևան

Պատմական գիտությունների թեկնածու **Կարեն Սեդրակի Թոխաթյանը** 1977 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի Աստղաֆիզիկայի բաժինը, որն ավարտել է 1982 թվականին:

1982-1984 թվականներին ծառայել է Խորհրդային բանակում որպես տանկային գումարտակի կապի պետ, ավագ լեյտենանտի կոչումով:

1985-1987 թվականներին սովորել է Մարքսիզմ-լենինիզմի համալսարանի Գաղափարական կադրերի ֆակուլտետի Միջազգային հարաբերությունների բաժնում, ստացել քաղմասսայական աշխատողի որակավորում:

1986 թվականից Հայաստանի լեռներում իրականացրել է մոտ 150 գիտարշավ, հայտնաբերել, քարտեզագրել ու դասակարգել է հազարավոր ժայռապատկերներ և տասնյակ հնաստղագիտական կառույցներ, տեղում իրականացրել դրանց պահպանության և բնակչության իրազեկման աշխատանք:

1995 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնում՝ որպես կրտսեր, 2023 թ.՝ ավագ գիտաշխատող:

Մասնակցել է բազմաթիվ հանրապետական և միջազգային գիտաժողովների և սեմինարների: Հրավիրվել է ժայռապատկերագիտական ու հնաստղագիտական գիտաժողովների (Վրաստան, Իտալիա, Հունաստան, Ղազախստան, Ռուսաստան, Չինաստան), որոնց զեկուցումները տպագրվել են ռուսերեն, անգլերեն, իտալերեն, հունարեն, իսպաներեն, չինարեն լեզուներով: Մասնակցել է ժայռապատկերներին և հնագույն աստղագիտությանը նվիրված բազմաթիվ ռադիո-հեռուստատեսային և առցանց հաղորդումների: Հեղինակել է շուրջ 100 գիտական հոդված՝ տպագրված հանրապետական և արտասահմանյան հեղինակավոր, այդ թվում՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընգրկված պարբերականներում:

1997-2000 թթ. դասավանդել է «Երևանի Բաց համալսարան» և «Դավիթ Անհաղթ» համալսարաններում:

2000 թ. հիմնել է «Ժայռապատկերների Ուսումնասիրության Հայկական Միություն – Տիր» ՀԿ (ARARA-T):

2002 թվականից վարում է Հայաստանի ժայռապատկերների www.armrockart.nt.am կայքը: Ձևավորում է Հին աշխարհի և Հայոց բնատարածքի ժայռապատկերների և հարակից հուշարձանների էլեկտրոնային «Քարտեզ-շտեմարանը»: Մասնակցում է գիտամշակութային զբոսաշրջության ոլորտի կազմակերպմանը:

2020 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայաստանի ժայռապատկերների տիպաբանությունը և պատմամշակութային նշանակությունը» խորագրով:

2025 թ. լույս է ընծայել «Հայաստանի ժայռապատկերները» մենագրությունը:

«Հայաստանի պատմագետների միության», «Հայկական Աստղագիտական Ընկերության», 2024 թվականից՝ ՀՀ ԿԳՄՄՆ փորձագիտական հանձնաժողովի անդամ է: 2023 թ. ընտրվել է «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի» և Հովհ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարանի գիտխորհուրդների կազմում:

2023 թվականից աշխատում է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում, բակալավրիատում և մագիստրատուրայում, դասավանդում «Հայ մշակույթ» և «Ազգային մշակույթ» առարկաները: Ղեկավարել և գրախոսել է տասնյակ ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր:

Արժանացել է՝

* Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Շնորհակալագրին՝ Ուսանողական գիտական ընկերության կազմակերպած «Մետաքսի ճանապարհը և Հայաստանը» գիտաժողովին մասնակցելու համար (2011 թ.),

* ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Գովեստագրին՝ ինստիտուտի հիմնադրման 70-ամյակի առթիվ և արդյունավետ գիտական գործունեության համար (2013 թ.),

* Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Շնորհակալագրին՝ «Հետազոտող ուսանող» գիտաժողովի աշխատանքներին ցուցաբերած ակտիվության և գործուն աջակցության համար (2025 թ.),

* ԿԳՄՄՆ Հավաստագրին՝ «Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրին» որպես վերապատրաստող դասախոս մասնակցելու համար (2025 թ.),

* Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Շնորհակալագրին՝ համալսարանի հիմնադրման 90-ամյակին նվիրված «Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում» միջազգային գիտաժողովի աշխատանքներին ունեցած մասնակցության և գործուն աջակցության համար (2025 թ.),

* ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Վաստակագրին՝ Աշխատանքի օրվա և ինստիտուտում երկարամյա գիտական գործունեության համար (2026 թ.):